



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի
Մ Ա Ր Ձ Պ Ե Տ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5

Հեռ. (+374281) 2 25 22

« 07 » « 11 » 2023թ.

N 01/13.4/7610-2023

«ԺՈՂՈՎՈՒՐԴ» ՕՐԱԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ
ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Ղազարյան

Ի պատասխան Ձեր 31.10.2023թ. հարցման՝ տեղեկացնում ենք, որ սեպտեմբերի 28-ի նիստով հատկացված 50000.0 հազ. դրամ գումարից 30000.0 հազ. դրամը հատկացվել էր «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» հոդվածով, որից ծախսվել է 12532.52 հազ. դրամ առաջին անհրաժեշտության ապրանքներ, սննդամթերք, դեղորայք, հիգիենայի պարագաներ ձեռք բերելու համար:

20000.0 հազ. դրամը նախատեսված էր «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով ծախսեր իրականացնելու համար: Գումարը ծախսվել է ամբողջությամբ Լեռնային Ղարաբաղից ՀՀ տեղափոխված անձանց գիշերակացով և սննդով ապահովելու համար:

Ծառայությունից օգտվել են Վայք քաղաքի հաշվառման կետ ժամանած Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ Վայոց ձորի մարզում տեղաբաշխված քաղաքացիները:

11/7/2023

X *Gr. Grigoryan*

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ